**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/11053-2026

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-1270-24.02.2026-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2026 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 273 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-1270-24.02.2026-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է.

1) սահմանել 18 ամսից պակաս ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հնարավորություն՝ 6 ամիս ժամկետով ծառայություն անցնելու դեպքում՝ 15 միլիոն դրամ, և 1 ամիս ժամկետով ծառայություն անցնելու դեպքում՝ 20 միլիոն դրամ պետական բյուջե վճարելու պայմանով.

2) պարտադիր զինվորական ծառայություն անցնելու սահմանային առավելագույն տարիքը 27-ի փոխարեն սահմանել 37 տարեկանը.

3) մինչև 18 տարին լրանալը կամ զորակոչային տարիքում ՀՀ քաղաքացիություն ստացած և մինչև ՀՀ քաղաքացիություն ստանալն այլ պետությունում զինվորական ծառայություն չանցած կամ 1 տարուց պակաս ժամկետով ծառայություն անցած քաղաքացիների համար սահմանել ՀՀ զինված ուժերում 12-ամսյա ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պարտականություն, ինչպես նաև այդ ժամկետով ծառայության չզորակոչվելու դիմաց նախատեսել 2,5 միլիոն դրամ պետական բյուջե վճարելու հնարավորություն.

4) մինչև 16 տարին լրանալը (զինվորական հաշվառման տարիքը լրանալը) ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու համար արական սեռի քաղաքացիների կողմից դիմում ներկայացնելու պետական տուրքի գումարը սահմանել 15 միլիոն դրամ.

5) Քրեական օրենսգրքում պատասխանատվություն սահմանել զորակոչից կամ վարժական հավաքից խուսափելու հիմքով քրեական վարույթ հարուցված այն քաղաքացիների վերաբերյալ, ովքեր հրաժարվում են նշանակված փորձաքննություն անցնելուց կամ հետազոտման համար նմուշ տալուց:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է նախագծերի վերաբերյալ իր դիտողություններն ու առաջարկությունները:

I. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում

փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Ներկա դրությամբ ժամանակավրեպ է 18-ից 27 տարեկան զորակոչի ենթակա անձանց որոշակի գումարի վճարմամբ պարտադիր զինվորական ծառայության ժամկետի կրճատումը՝ հաշվի առնելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում 2025 թ. դեկտեմբերի 16-ի ՀՕ-405-Ն օրենքով կատարված փոփոխությունը: Նույն դիտարկումը վերաբերում է նաև մինչև զորակոչային տարիքը լրանալը կամ զորակոչային տարիքում ՀՀ քաղաքացիություն ստացած անձանց պարտադիր զինվորական ծառայության ժամկետին և պարտադիր զինվորական ծառայության փոխարեն համապատասխան չափով գումար վճարելու առաջարկությանը:

2. Ներկա դրությամբ ժամանակավրեպ է նաև զորակոչի տարիքը մինչև 37 տարեկանը նախատեսելու դրույթը, նկատի ունենալով, որ այն կարող է բացասաբար անդրադառնալ Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական ցուցանիշների վրա՝ հաշվի առնելով, որ տվյալ տարիքային խմբում սովորաբար սկսվում է ամուսնության և ընտանիքի ձևավորման գործընթացը: Նշված իրավակարգավորման արդյունքում 18-ից մինչև 37 տարեկան անձինք զինվորական ծառայությունը պետք է անցկացնեն միևնույն պայմաններում, սակայն պարզ չէ, թե արդյոք հաշվի առնվել են վերջիններիս տարիքային տարբերությունով պայմանավորված անձնային առանձնահատկությունները, որը կարող է հանգեցնել «սերունդների բախման», ինչի արդյունքում կառաջանան ներանձնային տարաձայնություններ ու վեճեր:

Բացի այդ, եթե ներկայումս ՀՀ տարածքից դուրս 9 տարի զինվորական ծառայությունից խուսափած 18-ից 27 տարեկան անձը 27 տարեկանը լրանալուց հետո կարող է վերադառնալ ՀՀ և գործող իրավակարգավորման պայմաններում կատարելով իր վրա դրված պարտավորությունները՝ ներգրավվել ՀՀ տնտեսական ու սոցիալական կյանքին, ապա նախագծով առաջարկվող փոփոխվող կարգավորումների պարագայում՝ 19 տարի այլ պետությունում աշխատանքի և կյանքի ապահովության պայմաններում զինվորական ծառայությունից խուսափած անձանց Հայաստան վերադառնալու հավանականությունն ակնհայտորեն նվազելու է, ինչն անուղղակիորեն կարող է խրախուսել արտագաղթը և առաջացնել դեմոգրաֆիկ խնդիր:

3. Նախագծի անցումային 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 27 տարին լրացած և Օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ բոլորը միասին՝ օրենքներ) պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված արական սեռի քաղաքացիների՝ մինչև 37 տարին լրանալը, իսկ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 45 տարին լրանալը, կարող են իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ 24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 6 ամիս ժամկետով՝

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 1 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով ութ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, եթե չունեն Օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք, կամ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության չզորակոչվել՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասով նախատեսված օրենքների խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած և համապատասխանաբար 27 կամ 35 տարին լրանալուց հետո Օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի իմաստով օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում, կամ որը, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդ-վածի 4-րդ մասի համաձայն, զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո:»:

Այս առումով, հարկ ենք համարում նշել, որ նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում խնդրահարույց կարող են լինել առաջին նախադասությամբ նախատեսվող դրույթները՝ հետևյալ նկատառումներով: Մասնավորապես, դրանում հստակ նշված է՝ «... Օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ բոլորը միասին՝ օրենքներ) պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառա-յություն չանցած արական սեռի քաղաքացիները», մինչդեռ, երրորդ նախադասությամբ նախագծի հեղինակը պարզաբանում է, թե «սույն մասի իմաստով՝ օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած» ձևակերպման մեջ որ դեպքերն են մտնում՝ «Սույն մասի իմաստով օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում, կամ որը, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո:»: «Սույն մասի իմաստով՝ օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ

այլընտրանքային ծառայություն չանցած» ձևակերպման նման մեկնաբանության արդյունքում կստեղծվի մի իրավիճակ, երբ 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվող իրավունքից կկարողանան օգտվել միայն արական սեռի այն քաղաքացիները, որոնց 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տարիքները լրացած է և վերջիններիս նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում: Այսինքն, այս խմբից կարող են դուրս մնալ 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տարիքները լրացած այն քաղաքացիները, որոնց նկատմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար դեռևս օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում չի հարուցվել, և վերջիններս 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվող իրավունքից օգտվելու համար պետք է սպասեն, մինչև իրենց նկատմամբ օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցվի:

4. Նախագծի անցումային 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ «.... 27 կամ 35 տարին լրանալուց հետո Օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:» ձևակերպման առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավակարգավորումներին:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

1) առողջական վիճակի պատճառով.

2) ընտանեկան պայմաններից ելնելով:

Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները: Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում են՝

1) պիտանի է զինվորական ծառայության համար.

2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.

3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար.

4) ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.

5) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.

6) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.

7) կարիք ունի բուժման.

8) ենթակա է կանչվելու վարժական հավաքի.

9) ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի:

Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

1) բուժման կարիք ունենալու կամ

2) զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչև մեկ տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

Վերոգրյալ կարգավորումներից ակնհայտ է դառնում, որ քաղաքացու՝ տարկետման հիմք ունենալու հանգամանքը կարող է որոշվել բացառապես բժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա, բացի այդ, տարկետման հիմք ունենալու հանգամանքը դեռևս չի բացառում քաղաքացու՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի լինելու և օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հանգամանքը՝ առանց նախագծով նախատեսված տասնհինգ միլիոն դրամը վճարելու:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տրվող տարկետումների վերաբերյալ հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ կարգավորումներին.

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) 65 տարին լրացած կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

2) առանց մոր մեծացող երեխա.

3) երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.

4) երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ

գտնվող կին.

5) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա ծնողների կամ միայնակ ծնողի այլ զավակի 18 տարին լրանալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու օրը, 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչև երկրորդ երեխայի կամ առնվազն զույգ երեխաների ծննդյան օրը, իսկ 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ մինչև 18 տարեկան քույր կամ եղբայր ունենալու դեպքում՝ մինչև քրոջ կամ եղբոր 18 տարին լրանալու օրը: Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված մյուս դեպքերում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա 27 տարին լրանալու օրը: Եթե 27 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա 27 տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ օրենքն արդեն իսկ նախատեսել է զինվորական ծառայությունից ազատվելու կարգավորում այն անձանց համար, ովքեր 27 տարին լրանալու օրվա դրությամբ ունեն տարկետման իրավունք՝ առանց տասնհինգ միլիոն դրամ վճարելու:

II. «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

1. Օրենքի նախագծով նախատեսվում է մինչև 18 տարեկան արական սեռի քաղաքացիների Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար սահմանված տուրքի սահմանաչափերը բարձրացնել 600 անգամ՝ գործող 25000 ՀՀ դրամը դարձնելով 15 մլն ՀՀ դրամ: Նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ մինչև 18 տարին լրանալը ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելով մեծ թվով քաղաքացիներ խուսափում են պարտադիր զինվորական ծառայությունից, ուստի 15 մլն ՀՀ դրամը սահմանելով օրենսդիրն այն համապատասխանեցնում է 27 տարին լրացած և պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած ՀՀ քաղաքացիների համար քրեական պատասխանատվությունից ազատվելու համար սահմանված գումարին:

Անդրադառնալով նախագծի հիմնավորմանը՝ հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Պետական տուրքի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝

«Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական

անձանցից, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր գանձույթ է»:

Տվյալ իրավական նորմի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքը սահմանված պարտադիր գանձույթ է, որը պայմանավորված է համապատասխան ոլորտներում պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ և դրա փոփոխումը չի կարող նպատակ հետապնդել մեկ այլ ոլորտում (տվյալ դեպքում՝ զինվորական ծառայության) հանցագործությունները կանխելու նպատակ:

Այս առումով, գտնում ենք որ զինվորական ծառայությունից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով, քաղաքացիություն փոխելու համար պետական տուրքի նման չափի բարձրացումը՝ խնդրահարույց է և չի բխում «Պետական տուրքի մասին» օրենքի 2-րդ հոդվածի հիմքում դրված նպատակներից:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիությունը փոխելու համար պետական տուրքի տարբերակված դրույքաչափ սահմանելու կառուցակարգը խնդրահարույց է, առաջարկվում է այն փոխարինել հանրային իրավական դրամական պարտավորությամբ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք նախագծի փոխարեն «Պաշտպանության մասին» օրենքի 21-րդ հոդվածում կատարել լրացում՝ հետևյալ բովանդակությամբ.

«Պաշտպանության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասից հետո լրացնել 3.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1. Մինչև զինվորական հաշվառման վերցվելը 16 տարին չլրացած արական սեռի քաղաքացիները սույն օրենքի ուժով Հայաստանի Հանրապետության նկատմամբ ունեն 15 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով հանրային իրավական դրամական պարտավորություն: Սույն մասով նախատեսված պարտավորությունն իրավահաջորդության կարգով չի փոխանցվում և դադարում է քաղաքացուն զինվորական հաշվառման վերցնելու փաստի ուժով կամ հօգուտ պետական բյուջեի վճարմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու դեպքում:»:

2. 2-րդ հոդվածով նախատեսված օրենքն ուժի մեջ է մտնելու ժամկետին (պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից)՝ հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:

Միևնույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 2018 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1437 որոշմամբ արձանագրել է, որ «…Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, անհրաժեշտ է իրավական ակտի փոփոխության կամ լրացման արդյունքում նոր իրավակարգավորումները ժամանակի մեջ և անձանց նկատմամբ գործողության մեջ դնելու

այնպիսի կանոնների պահպանումը, որոնց գործադրմամբ երաշխավորվեն նրանց իրավունքների իրացման իրավաչափ պայմաններ: Դա Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում առավել կարևոր է հատկապես այն դեպքերում, երբ խնդիրն առնչվում է հնարավոր փոփոխությունների արդյունքում անձի իրավունքների իրացման պայմանների վատթարացմանը (խստացմանը): Քննության առարկա գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքում նման փոփոխությունների գործադրումը պետք է զուգորդվի այնպիսի իրավապայմանների սահմանմամբ, որոնք, մասնավորապես, կերաշխավորեն հարկային պարտականությունների կատարման կանխատեսելիություն և դրան համապատասխան՝ սուբյեկտիվ վարքագծի դրսևորման համարժեք հնարավորություն (...)»:

Վերոգրյալ կարգավորումները և Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումը համադրելով նախագծում նախատեսված նորմն ուժի մեջ մտնելու ժամկետի հետ՝ անհրաժեշտ է սահմանել նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ:

III. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 462.1-ին հոդվածով՝

«1. Սույն օրենսգրքի 461-րդ հոդվածի կամ 462-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննության ենթարկելուց հրաժարվելը կամ խուսափելը կամ հետազոտման համար նմուշ տալուց հրաժարվելը կամ խուսափելը.

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մինչև վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը կամ դատական քննության ընթացքում մինչև դատարանի կողմից դատավճիռ կամ որոշում կայացնելու նպատակով առանձին սենյակ հեռանալը, կամավոր ներկայացել է նմուշառմանը կամ կամավոր ենթարկվել է փորձաքննության:»:

Հարկ է արձանագրել, որ փորձաքննությունից հրաժարվելը քրեականացնելու առաջարկն անհրաժեշտ է դիտարկել նաև այն բանի հաշվառմամբ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, օրինակ, ճանաչում է պետությունների իրավունքը՝ որոշ դեպքերում անձի կամքին հակառակ իրականացնել փորձաքննություն կամ նմուշառում (օր.՝ քրեական վարույթում, հանրային առողջության ապահովման համար) միայն այն դեպքում, երբ այդ միջամտությունը համաչափ է: Ընդ որում, համաչափությունը ենթակա է գնահատման հետևյալ հարցադրումների շրջանակում. արդյո՞ք առկա է հստակ և կանխատեսելի իրավական հիմք, արդյո՞ք այն կարևոր է հանրային շահի տեսանկյունից, միջոցը նվազագույնի հասցնո՞ւմ է արդյոք անձի տառապանքը կամ նվաստացումը, կան արդյո՞ք վերահսկողության և բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ: Եթե այս չափանիշները խախտվում են, ՄԻԵԴ-ը սովորաբար արձանագրում է 8-րդ հոդվածի խախտում, իսկ դաժան կամ նվաստացուցիչ մեթոդների դեպքում՝ նաև 3-րդ հոդվածի խախտում:

ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում ձևավորված դիրքորոշումներին համահունչ ՀՀ ներպետական օրենսդրությամբ մեղադրյալի համար, ի թիվս այլնի, սահմանվել են քննման, փորձաքննության և փորձաքննության համար նմուշ հանձնելու պարտակա-նություններ, ինչպես նաև նախատեսվել են այդ պարտականությունները չկատարելու համար վրա հասնող անբարենպաստ հետևանքներ:

Այսպես. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ ՔԴՕ) 18-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

«7. Ֆիզիկական հարկադրանքը, անհրաժեշտ նվազագույն միջամտության պայմանով, թույլատրելի է միայն այն անձի նկատմամբ, որը կամավոր չի կատարում իր անձնական անձեռնմխելիությանը միջամտող՝ իրավասու անձի իրավաչափ կարգա-դրությունը:»:

ՀՀ ՔԴՕ 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«2. Մեղադրյալը պարտավոր է՝

1) ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով.

2) վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել բժշկական զննման, մատնադրոշմման, անձնական խուզարկության, քննման և փորձաքննության, լուսա-նկարվել կամ փորձաքննության համար հանձնել սույն օրենսգրքով նախատեսված նմուշներ. (...)»:

Այսպիսով, ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը, իմպերատիվ կերպով սահմանելով խոշտանգման, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի արգելքը, միաժամանակ նախատեսել է քրեական վարույթի շրջանակներում անձի վրա դրված պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով ֆիզիկական հարկադրանք կիրառելու հնարավորություն՝ միաժամանակ նախատեսելով նման հարկադրանք կիրառելու իրավաչափության հետևյալ պայմանները՝

ա. ֆիզիկական հարկադրանք կարող է կիրառվել միայն այն անձի նկատմամբ, ով կամավոր չի կատարում իր անձնական անձեռնմխելիությանը միջամտող՝ իրավասու անձի իրավաչափ կարգադրությունը,

բ. ֆիզիկական հարկադրանքը կարող է կիրառվել բացառապես անհրաժեշտ նվազագույն միջամտության պայմանով: Սա նշանակում է, որ պետք է կիրառվի ֆիզիկական հարկադրանքի այն նվազագույն մակարդակը, որը բավարար է ակնկալվող արդյունքին հասնելու համար: Հակառակ դեպքում մեծ է հավանականությունը, որ ակնկալվող արդյունքի և կիրառված միջամտության հավասարակշռության խախտման արդյունքում ֆիզիկական հարկադրանքը կվերաճի անձի նկատմամբ վատ վերաբերմունքի, անգամ՝ խոշտանգման:

Բացի այդ, Կառավարությունը գտնում է, որ փորձաքննությունից հրաժարվելը քրեականացնելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանել բժշկական զննության պարտադիր լինելը և առողջական վիճակի փորձաքննությունից հրաժարվելու դեպքում քրեական պատասխանատվություն ծագելու պահանջը, որի կապակցությամբ առաջարկվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 17-րդ հոդվածը լրացնել նոր մասով, որի համաձայն՝ «Քաղաքացու կողմից առողջական վիճակի հետազոտումից կամ առողջական վիճակի փորձաքննությունից հրաժարվելն առաջացնում է քրեական պատասխանատվություն:»:

Վերոգրյալը հաշվի առնելով, ընդհանուր համատեքստում, Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ձեռնպահ մնալ առաջարկվող փոփոխությունների կատարումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 273 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-1270-24.02.2026-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

02.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1270-24.02.2026-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1) շարքային կազմի՝

ա. արական սեռի քաղաքացիների համար՝ 18 ամիս, կամ 6 ամիս՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 15 միլիոն դրամ վճարելու դեպքում, կամ 1 ամիս՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 20 միլիոն դրամ վճարելու դեպքում.

բ. կամավոր հիմունքներով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար դիմած իգական սեռի քաղաքացիների համար՝ 6 ամիս.».

2) 1.1-ին կետում «19-րդ հոդվածի 1.1-ին մասում» բառերը փոխարինել «21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում» բառերով.

3) ուժը կորցրած ճանաչել 1.2-րդ կետը:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. «27 տարին լրանալը, իսկ սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ եւ 7-րդ մասերով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից՝ գիտության եւ կրթության բնագավառներում տարկետում ստացած քաղաքացիները՝ մինչեւ 28 տարին լրանալը» բառերը, թվերը եւ կետադրական նշանները փոխարինել «37 տարին լրանալը» բառերով եւ թվով,

բ. «27, 28 եւ (կամ)» բառերը, թվերը եւ կետադրական նշանները փոխարինել «37 կամ» բառերով եւ թվով.

2) ուժը կորցրած ճանաչել 1.1-ին եւ 1.2-րդ մասերը:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «ծառայություն» բառից հետո «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով եւ լրացնել նոր նախադասություն՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Սույն կետում նշված՝ մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով այլ պետությունում զինվորական կամ 18 ամսից պակաս ժամկետով այլընտրանքային ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչեւ 37 տարեկան արական սեռի քաղաքացին սույն մասի 1-ին կամ 3-րդ կետերով կամ 2-րդ կամ 5-րդ մասերով

սահմանված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու կամ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերով կամ 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հիմքեր չունենալու դեպքում կարող է 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում այլընտրանքային ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ եւ ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից.»:

Հոդված 4. Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասում «27» թիվը փոխարինել «37» թվով:

Հոդված 5. Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ եւ երրորդ նախադասություններում «27» թիվը փոխարինել «37» թվով:

Հոդված 6. Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերում «մինչեւ 27 տարին լրանալը, իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝» բառերը, թվերը եւ կետադրական նշանները եւ «իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում՝ մինչեւ 45 տարին լրանալը,» բառերը, թվերը եւ կետադրական նշանները հանել:

Հոդված 7. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասում ուժը կորցրած ճանաչել 2.1-ին եւ 2.2-րդ կետերը:

Հոդված 8.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի՝

1) 1-ին հոդվածի 1-ին կետով փոփոխված Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մաս 1-ին կետի «ա» ենթակետի գործողությունը չի տարածվում սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող զինծառայողների վրա.

2) 2-րդ հոդվածի 1-ին կետի գործողությունը՝

ա. տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 16 տարին լրացող արական սեռի քաղաքացիների վրա,

բ. տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը 18 տարին լրացած եւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած արական սեռի քաղաքացիների վրա,

գ. չի տարածվում մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիների վրա, որոնք շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա են մինչեւ 27 տարին լրանալը.

3) 3-րդ հոդվածի գործողությունը տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը 18 տարին լրացած եւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած արական սեռի քաղաքացիների վրա.

4) 4-րդ եւ 5-րդ հոդվածների գործողությունը չի տարածվում մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենքի 23-րդ կամ 24-րդ հոդվածներով սահմանված տարկետում ստացած արական սեռի քաղաքացիների վրա.

5) 6-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելն Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետերի կամ 2-րդ մասի հիման վրա պարտադիր զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակված եւ պահեստազորում հաշվառված, ինչպես նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը մինչեւ 27 տարին լրանալը շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցնելու պարտականություն ունեցող քաղաքացու վրա, որի վրա Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ մասերի գործողությունը տարածվում է մինչեւ քաղաքացու 27 տարին լրանալը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 27 տարին լրացած եւ Օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ բոլորը միասին՝ օրենքներ) պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված արական սեռի քաղաքացիների՝ մինչեւ 37 տարին լրանալը, իսկ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները՝ մինչեւ 45 տարին լրանալը, կարող են իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ 24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 6 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 1 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով ութ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, եթե չունեն Օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք, կամ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության չզորակոչվել՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասով նախատեսված օրենքների խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած եւ համապատասխանաբար 27 կամ 35 տարին լրանալուց հետո Օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության եւ պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի իմաստով՝ օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում, կամ որը, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո:

4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 90 օրացուցային օրվա ընթացքում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1270ˈ-24.02.2026-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Մինչեւ 18 տարեկան արական սեռի քաղաքացիների Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար	բազային տուրքի 15.000 - պատիկի չափով»

2) 2-րդ կետից հետո լրացնել նոր 3-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«3. Իգական սեռի քաղաքացիների եւ 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիների Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար	բազային տուրքի 150 - պատիկի չափով»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1270²-24.02.2026-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը ռացնել հետեւյալ բովանդակությամբ 226.1-ին հոդվածով.

«*Հոդված 462.1.* Սույն օրենսգրքի 461-րդ հոդվածով կամ 462-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննության ենթարկվելուց հրաժարվելը կամ խուսափելը կամ հետազոտման համար նմուշ տալուց հրաժարվելը կամ խուսափելը

1. Սույն օրենսգրքի 461-րդ հոդվածի կամ 462-րդ հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննության ենթարկվելուց հրաժարվելը կամ խուսափելը կամ հետազոտման համար նմուշ տալուց հրաժարվելը կամ խուսափելը.

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե մինչեւ վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը կամ դատական քննության ընթացքում մինչեւ դատարանի կողմից դատավճիռ կամ որոշում կայացնելու նպատակով առանձին սենյակ հեռանալը, կամավոր ներկայացել է նմուշառմանը կամ կամավոր ենթարկվել է փորձաքննության:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունման

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է պարտադիր զինվարական ծառայության գրավչությունը բարձրացնելու, որևէ ճանապարհով ծառայությունից խուսափելը դժվարացնելու, ինչպես նաև զորակոչվողների թիվը մեծացնելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

վերլուծելով վերջին 10 տարիների պարդատիր զինվորական ծառայության զորակոչերի ընթացքում զորակոչի հրավիրված, զորակոչի ներկայացած, զորակոչից տարկետում ստացած, զորակոչից ազատված և պարտադիր զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների թվերը, պարզ է դառնում, որ վերջնարդյունքում հրավիրվածների միայն 30-ից 40 տոկոսն է զորակոչվում ծառայության: Տարածաշրջանային անվտանգային միջավայրով և մի շարք այլ գործոններով պայմանավորված, մեծ թվով քաղաքացիներ խուսափում են պարտադիր զինվորական ծառայությունից մի շարք ճանապրահներով՝

• միչև 18 տարին լրանալը հրաժարվում են ՀՀ քաղաքացիությունից (2020-ից 2025 թվականների ընթացքում, արական սեռի մինչև 18 տարեկան 11.994 ՀՀ քաղաքացի դիմել է ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու համար),

• մեկնում են ՀՀ-ից բուժման, ուսման կամ այլ պատրվակով և մինչև 27 կամ 37 տարին լրանալը չեն վերադառնում (2010-ից 2024 թվականների ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով (նախկին 327-րդ) հարուցված քրեական գործերից 2.494-ը կարճվել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով),

• ծառայությունից ազատվելու համար զինվորական ծառայության հետ անհամատեղելի հիվանդությունների թղթեր են պատրաստում: Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացածների և ծառայությունից ազատվածների թվի ավելի քան 80 տոկոսն են կազմում առողջական խնդիրներով պայմանավորված ազատվածներն ու տարկետում ստացածները:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Օրենսդրական նախաձեռնության և կից առաջարկվող կառավարության որոշումներում փոփոխություններ կատարելու նպատակն է՝ բարձրացնել պարտադիր զինվորական ծառայության գրավչությունը, կանգնեցնել արտագաղթը, կանխել մեծ թվով արական սեռի քաղաքացիների ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու դեպքերը, կանխել մեծ թվով արական սեռի քաղաքացիների մինչև 37 տարին լրանալը հետախուզման մեջ մնալը, քրեականացնելով նվազագույնի հասցնել պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով փորձաքննությունից հրաժարվելու դեպքերը: Ստորև հակիրճ խստացնող և խրախուսող կարգավորումները. Խստացնող կարգավորումներ.

1. Ներկայիս կառավարության որոշումներում, կատարել փոփոխություններ և որոշ առողջական խնդիրների դեպքում զորակոչել սահմանափակումով պարտադիր զինվորական ծառայության:
2. Ժամկետային զինվորական ծառայության սահմանային տարիքը 27-ից դարձնելով 37 տարի:
3. Մինչև 18 տարեկան արական սեռի քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար բազային տուրքը դարձնել 15.000.000 դրամ: Սա այն գումարն է, որը 27 տարին լրացած և պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած ՀՀ քաղաքացիները կարող են վճարել և ազատվել քրական պատասխանատվությունից:
4. Քրեականացնել Քրեական օրենսգրքի 461-րդ (Պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից կամ զորահավաքային զորակոչից խուսափելը) հոդվածի կամ 462-րդ (Վարժական հավաքից խուսափելը) հոդվածի հատկանիշներով քննվող քրեական վարույթի շրջանակում նշանակված փորձաքննության ենթարկվելուց հրաժարվելը կամ խուսափելը կամ հետազոտման համար նմուշ տալուց հրաժարվելը կամ խուսափելը: Խրախուսող կարգավորումներ.
1. Սույն օրենսդրական փոփոխությունների արդյունքում գոյացող լրացուցիչ ֆինանսական միջոցների մի մասն ուղղել պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր չկնքած զինծառայողների) դրամական ապահովության չափերի բարձրացմանը: Ներկայումս շարքային զինվորական կոչում ունեցող ժամկետային զինծառայողները ստանում են ամսական 3400 ՀՀ դրամ դրամական ապահովություն:
2. Կրճատված ժամկետով զինվորական ծառայության հնարավորություն տալ նաև 18 տարեկաններին: Գործող օրենսդրությամբ նման հնարավորություն ունեն 27 տարին լրացած և օրենքի պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 37 տարին լրանալը, իսկ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 45 տարին լրանալը:
3. Խրախուսել արական սեռի անձանց ստանալ ՀՀ քաղաքացիություն մինչև պարտադիր զինվորական ծառայության սահմանային տարիքի լրանալը՝ տալով հնարավորություն ծառայել կրճատված ժամկետով կամ ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սահմանված չափով գումար: Գործող կարգավորումներով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակաչի ենթակա են օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած և մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով այլ պետությունում զինվորական կամ 18 ամսից պակաս ժամկետով այլընտրանքային ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչև 37 տարեկան արական սեռի քաղաքացիները: Այս կարգավորումով պայմանավորված, ՀՀ քաղաքացիություն ստանալու համար ծառայությունից ազատման հիմքեր չունեցող արական սեռի անձինք դիմում են միայն 27 տարին լրանալուց հետո:
Ցանկանում եմ հատուկ նշել որ, սույն օրենսդրական փոփոխությունների փաթեթը կառավարության գործընկերների հետ բավականին երկար ժամական քննարկելուց և ընդհանուր համաձայնության գալուց հետո սահմանված կարգով շրջանառել եմ նաև 2025 թվականի ապրիլի 11-ին: 2025 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է ընդունել՝ հավանություն տալ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-Ի ՀՕ-23-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-1050-11.04.2025-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը: Չնայած այն հանգամանքին, որ նախագիծը աշխատանքային կարգով շրջանառվել էր ավելի քան մեկ տարի, մի շարք պատգամավորներ չէին հասցրել ամբողջությամբ ծանոթանալ դրա բովանդակությանը և խնդրել էին լրացուցիչ ժամանակ՝ քննարկումների համար: Այդ պատճառով 2025 թվականի հունիսի 17-ին Ազգային ժողովում նախագիծը մերժվեց: Նախագծի մերժումից անցել է ավելի քան 7 ամիս: Այս ընթացքում պատգամավորներից որևէ գրավոր առաջարկ կամ

փոփոխության նախաձեռնություն չեմ ստացել: Ուստի նախագիծը կրկին շրջանառում եմ 2026 թվականի փետրվարի 19-ին: Օրենքի մերժումը վերջին 7 ամիսների ընթացքում ունեցել է մի շարք բացասական հետևանքներ.

1. Բազմաթիվ արական սեռի քաղաքացիներ լքել են Հայաստանի Հանրապետությունը՝ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով:
2. Հետախուզման մեջ գտնվող բազմաթիվ քաղաքացիներ, չունենալով կարճաժամկետ ծառայության հնարավորություն, չեն վերադարձել հայրենիք:
3. Շարունակվել է ծառայությունից խուսափելու պրակտիկան՝ փորձաքննությունից խուսափելու միջոցով:
4. ՀՀ քաղաքացիությունից հրաժարվողների թիվը աճել է 44.2%-ով: Եթե 2024 թվականին մինչև 18 տարեկան արական սեռի 1,949 քաղաքացի է դիմել ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու համար, ապա 2025 թվականին այդ թիվը հասել է 2,811-ի:
5. Պետական բյուջե չեն մուտքագրվել ակնկալվող միլիարդավոր դրամներ, որոնք նախատեսվում էր սահմանված կարգով բաշխել պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողների միջև: Այս պայմաններում օրենքի ընդունումը կենսական անհրաժեշտություն է: Մենք փաստացի կորցնում ենք հսկայական մարդկային ռեսուրս: Տասնյակ հազարավոր քաղաքացիներ շարունակում են խուսափել ծառայությունից, մնալ հետախուզման մեջ կամ հրաժարվել ՀՀ քաղաքացիությունից: Միայն 2025 թվականին ՀՀ քաղաքացիությունից հրաժարվածների թիվը կազմել է նույն տարում բանակ մեկնածների շուրջ 27 տոկոսը: Սա նշանակում է, որ խնդրի լուծման հետաձգումը փաստացի հանգեցնում է ժամկետային զինծառայողների թվի 27 տոկոսով նվազեցմանը: Այլ կերպ ասած՝ մենք ինքներս ենք թուլացնում մեր զորակոչային ներուժը: Միևնույն ժամանակ շարունակվում է խորանալ սոցիալական անհավասարությունն ու անարդարությունը: Բանակ չեն զորակոչվում բավարար ֆինանսական միջոցներ ունեցող ընտանիքների տղաները նրանք տարբեր եղանակներով ֆինանսական միջոցներ են ծախսում՝ ծառայությունից խուսափելու նպատակով, մինչդեռ օրենքի ընդունման պարագայում այդ միջոցները կուղղվեն պետական բյուջե և կբաշխվեն ծառայություն անցնող զինծառայողների միջև: Ավելին, այդ քաղաքացիները ոչ թե մեկընդմիշտ կազատվեն ծառայությունից, այլ կանցնեն կրճատված ժամկետով զինվորական ծառայություն, կհաշվառվեն ակտիվ պահեստազորում և հետագայում կներգրավվեն վարժական հավաքներին: Այսինքն՝ կշարունակեն մասնակցել երկրի պաշտպանության գործին: Այսօր անարդարությունը շարունակվում է նաև ծառայությունից հետո ծառայած քաղաքացիները շարունակում են կրել պաշտպանության բեռը, մինչդեռ ծառայությունից խուսափածներն ու քաղաքացիությունից հրաժարվածները որևէ ներդրում չեն ունենում պաշտպանության համակարգում: Այս անհավասարությունն այլևս չի կարելի պահպանել: Օրենքի ընդունումը ոչ միայն արդարության վերականգնման, այլև ազգային անվտանգության ամրապնդման հարց է: Ներկայումս նախագիծը կրկին շրջանառում եմ գրեթե նույն բովանդակությամբ, ինչպես այն ներկայացվել էր առաջին անգամ՝ 2025 թվականին: Միակ փոփոխությունն այն է, որ օրենքների նախագծերի 4 մասից բաղկացած փաթեթից հանել եմ այն նախագիծը, որը առանձին շրջանառել էի և Ազգային ժողովի կողմից 2026 թվականի փետրվարի 11-ին ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ: Մնացած մասով նախագիծը չի լրամշակվել: Միևնույն ժամանակ պատրաստ եմ քննարկումների ընթացքում այն լրացնել և հարստացնել Կառավարության կողմից ներկայացված առաջարկություններով: Ստորև ներկայացնում եմ օրենքների նախագծերի փաթեթի առաջին շրջանառության ընթացքում Կառավարության կողմից հավանության արժանացած համապատասխան որոշման նախագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ _ մայիսի 2025 թվականի N - Լ «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ՀՕ-23-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի ՀՕ-23-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-1050- 11.04.2025-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2025թ. մայիսի Երևան

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի ՀՕ-23-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ1050-11.04.2025-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի ՀՕ-23-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթով (Պ-1050- 11.04.2025-ՊԱ-011/0) առաջարկվում է՝

1) սահմանել 24 ամսից պակաս ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հնարավորություն՝ 1 ամիս ժամկետով ծառայություն անցնելու դեպքում՝ 20 միլիոն դրամ, և 6 ամիս ժամկետով ծառայություն անցնելու դեպքում՝ 15 միլիոն դրամ պետական բյուջե վճարելու պայմանով,

2) պարտադիր զինվորական ծառայություն անցնելու սահմանային առավելագույն տարիքը 27-ի փոխարեն սահմանել 37 տարեկանը,

3) մինչև 18 տարին լրանալը կամ զորակոչային տարիքում ՀՀ քաղաքացիություն ստացած և մինչև ՀՀ քաղաքացիություն ստանալն այլ պետությունում զինվորական ծառայություն չանցած կամ 1 տարուց պակաս ժամկետով ծառայություն անցած քաղաքացիների համար ՀՀ զինված ուժերում օրենքով սահմանված 24-ամսյա ծառայության ժամկետը փոխարինել 12-ամսյա ժակետով ծառայությամբ, ինչպես նաև այդ ժամկետով ծառայության չզորակոչվելու դիմաց նախատեսել 2,5 միլիոն դրամ պետական բյուջե վճարելու պարտականություն,

4) մինչև 16 տարին լրանալը (զինվորական հաշվառման տարիքը լրանալը) ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու համար արական սեռի քաղաքացիների կողմից դիմում ներկայացնելու պետական տուրքի գումարը սահմանել 15 միլիոն դրամ,

5) Քրեական օրենսգրքում պատասխանատվություն սահմանել զորակոչից կամ վարժական հավաքից խուսափելու հիմքով քրեական վարույթ հարուցված այն քաղաքացիների վերաբերյալ, ովքեր հրաժարվում են նշանակված փորձաքննություն անցնելուց կամ հետազոտման համար նմուշ տալուց: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է նախագծերի վերաբերյալ իր առաջարկություններն ու դիտողությունները:

I. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.
1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի «ա» կետում առաջարկում ենք՝ «6 ամիս» բառերը փոխարինել «4 ամիս» բառերով, «15 միլիոն» բառերը փոխարինել «18 միլիոն» բառերով, իսկ «20 միլիոն» բառերը փոխարինել «24 միլիոն» բառերով:
2. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող փոփոխությամբ քաղաքացիների զորակոչի ենթակա առավելագույն տարիքը նախատեսվում է դարձնել մինչև 37 տարեկանը լրանալ: Առաջարկում ենք զորակոչի սահմանային տարիքը սահմանել մինչև 32 տարին լրանալը, նկատի ունենալով, որ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած և ՀՀ կառավարության 15 փետրվարի 2019 թվականի 89-Ն որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվող քաղաքացիների համար ասպիրանտուրայի կրթական ծրագրի ավարտելուց հետ նախատեսվում է սահմանել ՀՀ-ում 3 տարի աշխատելու պարտադիր պայման՝ օտարերկրյա լավագույն բուհերում մասնագիտություն ստացած ՀՀ քաղաքացիների ներուժը ՀՀ-ում օգտագործելու համար, որից հետո միայն սահմանել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հնարավորություն: Այս առումով 28 տարեկանի օրենսդրական սահմանումը տարիքային առումով այդ հնարավորությունը չի ընձեռում, հետևաբար առաջարկվող փոփոխությամբ 28 տարեկանից հետո կլինի 3 տարվա պայմանագրային պարտավորության համար սահմանված ժամանակ և այն լրանալուց հետո միայն քաղաքացին կկարողանա դիմել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու համար:
3. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկում ենք լրացում կատարել նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 4-րդ մասում հետևյալ բովանդակությամբ. «ժամկետները» բառից հետո լրացնել «, սույն օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված 24 ամսից պակաս ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու դիմում ներկայացնելու իրավունք ունեցող քաղաքացիների առավելագույն քանակը և դիմումների ներկայացման կարգը» բառերը:
4. Նախագծի 3-րդ հոդվածով Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հետո լրացվող նախադասությունն առաջարկում ենք նախատեսել առանձին մասի տեսքով՝ նկատի ունենալով, որ այն իմաստային առումով հնարավոր չէ նախատեսել Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակության մեջ, քանի որ նշված մասը նախատեսում է, որ՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝...:
5. Նախագծի 5-րդ հոդվածում «երկրորդ և երրորդ նախադասություններում» բառերը առաջարկում ենք փոխարինել «ամբողջ տեքստում» բառերով՝ ինկորպորացման հետ կապված հետագա խնդիրներից խուսափելու նպատակով:
6. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «կետով» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «մասի 1-ին» բառերը, իսկ «փոփոխված Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մաս» բառերն անհրաժեշտ է հանել: Նույն դիտողությունը վերաբերում է նաև 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «կետի» բառին:
7. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում առաջարկում ենք ներառել նաև այն քաղաքացիներին, որոնք օրենքն ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ դիմած կլինեն Օրենքով սահմանված կարգով տարկետում ստանալու համար: Նշվածի կապակցությամբ հայտնում ենք, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Այս նորմերն ըստ էության ամրագրում են իրավական ակտի՝ ժամանակի մեջ

գործողության կանոնները («Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք, հոդված 28): Եթե որևիցե իրավական ակտ սահմանում է նշված կանոնների համեմատ այլ՝ հակասող կարգավորում, ապա դրանք չեն կարող կիրառվել: Ըստ Սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը:

8. Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 27 տարին լրացած և Օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ բոլորը միասին՝ օրենքներ) պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նշված արական սեռի քաղաքացիների՝ մինչև 37 տարին լրանալը, իսկ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները՝ մինչև 45 տարին լրանալը, կարող են իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ 24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 6 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 1 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով ութ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, եթե չունեն Օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք, կամ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության չզորակոչվել՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասով նախատեսված օրենքների խախտմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած և համապատասխանաբար 27 կամ 35 տարին լրանալուց հետո Օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:» Սույն մասի իմաստով օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում, կամ որը, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո: Այս առումով, հարկ ենք համարում նշել, որ նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում խնդրահարույց կարող են լինել առաջին նախադասությամբ նախատեսվող դրույթները՝ հետևյալ նկատառումներով: Մասնավորապես, դրանում հստակ նշված է՝ «... Օրենքի կամ 2021 թվականի հունվարի 1-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ բոլորը միասին՝ օրենքներ) պահանջների խախտմամբ շարքային կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները», մինչդեռ, երրորդ նախադասությամբ Նախագծի հեղինակը պարզաբանում է, թե «սույն մասի իմաստով՝ օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած» ձևակերպման մեջ որ դեպքերն են մտնում՝ «Սույն մասի իմաստով օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի նկատմամբ

շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում, կամ որը, «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, զինվորական հաշվառման կանգնելու համար դիմել է 27 տարին լրանալուց հետո:»: «սույն մասի իմաստով՝ օրենքների պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայություն չանցած» ձևակերպման նման մեկնաբանության արդյունքում կստեղծվի մի իրավիճակ, երբ 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվող իրավունքից կկարողանան օգտվել միայն արական սեռի այն քաղաքացիները, որոնց 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տարիքները լրացած է և վերջիններիս նկատմամբ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում: Այսինքն, այս խմբից կարող են դուրս մնալ 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տարիքները լրացած այն քաղաքացիները, որոնց նկատմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար դեռևս օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում չի հարուցվել, և վերջիններս 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվող իրավունքից օգտվելու համար պետք է սպասեն, մինչև իրենց նկատմամբ օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցվի:

9. Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ «.... 27 կամ 35 տարին լրանալուց հետո Օրենքով սահմանված՝ շարքային կազմի կամ պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:» ձևակերպման առնչությամբ հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ իրավակարգավորումներին. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հիմք չունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է՝

1) առողջական վիճակի պատճառով.
2) ընտանեկան պայմաններից ելնելով:

Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները: Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում են՝

1) պիտանի է զինվորական ծառայության համար.
2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.
3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար.
4) ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.
5) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.
6) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.
7) կարիք ունի բուժման.
8) ենթակա է կանչվելու վարժական հավաքի.
9) ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի:

Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից քաղաքացուն առողջական վիճակի պատճառով տարկետում տրվում է՝

1) բուժման կարիք ունենալու կամ

2) զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչվելու դեպքերում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչև մեկ տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից: Վերոգրյալ կարգավորումներից ակնհայտ է դառնում, որ քաղաքացու՝ տարկետման հիմք ունենալու հանգամանքը կարող է որոշվել բացառապես բժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա, բացի այդ, տարկետման հիմք ունենալու հանգամանքը դեռևս չի բացառում քաղաքացու՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի լինելու և Օրենքով սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հանգամանքը՝ առանց Նախագծով նախատեսված տասնհինգ միլիոն դրամը վճարելու: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն տրվող տարկետումների վերաբերյալ հարկ ենք համարում անդրադառնալ հետևյալ կարգավորումներին. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) 65 տարին լրացած կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝ ա. չունեն այլ զավակ կամ բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

2) առանց մոր մեծացող երեխա.

3) երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.

4) երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին.

5) մինչև 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում) կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա ծնողների կամ միայնակ ծնողի այլ զավակի 18 տարին լրանալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու օրը, 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչև երկրորդ երեխայի կամ առնվազն զույգ երեխաների ծննդյան օրը, իսկ 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ մինչև 18 տարեկան քույր կամ եղբայր ունենալու դեպքում՝ մինչև քրոջ կամ եղբոր 18 տարին լրանալու օրը: Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված մյուս դեպքերում քաղաքացուն տարկետում տրվում է մինչև նրա 27 տարին լրանալու օրը: Եթե 27 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա 27 տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից: Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ Օրենքը արդեն իսկ նախատեսել է զինվորական ծառայությունից ազատվելու կարգավորում այն անձանց համար ովքեր 27 տարին լրանալու օրվա դրությամբ ունեն տարկետման իրավունք՝ առանց տասնհինգ միլիոն դրամ վճարելու:

10. Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ նախագծի 3-րդ հոդվածի գործողությունը տարածվում է նաև մինչև նախագծի ուժի մեջ մտնելը 18 տարին լրացած և

Նախագիծն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած արական սեռի քաղաքացիների վրա: Վերոնշյալ դրույթներն որոշակի տարընկալման տեղիք են տալիս, եթե դրանք տարածվում են 18 տարին լրացած և նախագիծն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած արական սեռի ՀՀ քաղաքացիների նկատմամբ, քանի որ այդ պարագայում հնարավոր են իրավիճակներ, երբ մինչև սույն նախագծի ուժի մեջ մտնելը 18 տարի լրացած քաղաքացին խուսափել է հերթական զորակոչից, իսկ ուժի մեջ մտնելուց հետո ընդամենը 2,5 մլն ՀՀ դրամ վճարելով կազատվի ծառայությունից, այն դեպքում, երբ ծառայությունից ազատվելու համար նախագծի 1-ին հոդվածով նախատեսված վճարման ենթակա գումարների չափերն ավելի բարձր են: Այն դեպքում, երբ նախագծի դրույթները վերաբերվում են այն ՀՀ քաղաքացիներին, որոնք մինչև ՀՀ քաղաքացիություն ստանալը ունենցել են այլ պետության քաղաքացիություն, ապա առաջարկվում է հստակ նշել այդ հանգամանքը նախագծի 8-րդ հոդվածում՝ իրավակիրառ պրակտիկայում հետագա տարընկալման տեղիք չտալու համար: Վերոգրյալի հիման վրա նախագծի 8-րդ հոդվածի՝ անցումային հարաբերություններ կարգավորող 2-րդ և 3-րդ մասերը լրացուցիչ քննարկման և հստակեցման կարիք ունեն:

II. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի ՀՕ-23-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.
1. Նախագծի 2-րդ հոդվածի «հաջորդող» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «օրվան» բառը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

III. «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.
1. Օրենքի նախագծով նախատեսվում է մինչև 18 տարեկան արական սեռի քաղաքացիների Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար սահմանված տուրքի սահմանաչափերը բարձրացնել 600 անգամ՝ գործող 25000 ՀՀ դրամը դարձնելով 15 մլն ՀՀ դրամ: Նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ մինչև 18 տարին լրանալը ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելով մեծ թվով քաղաքացիներ խուսափում են պարտադիր զինվորական ծառայությունից, ուստի 15 մլն ՀՀ դրամը սահմանելով օրենսդիրն այն համապատասխանեցնում է 27 տարին լրացած և պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած ՀՀ քաղաքացիների համար քրեական պատասխանատվությունից ազատվելու համար սահմանված գումարին: Անդրադառնալով Նախագծի հիմնավորմանը՝ հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Պետական տուրքի մասին» օրենքի 2-րդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր գանձույթ է»: Տվյալ իրավական նորմի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ պետական տուրքը սահմանված պարտադիր գանձույթ է, որը պայմանավորված է համապատասխան ոլորտներում պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ և դրա փոփոխումը չի կարող նպատակ հետապնդել մեկ այլ ոլորտում (տվյալ դեպքում՝ զինվորական ծառայության) հանցագործությունները կանխելու նպատակ: Այս առումով, գտնում ենք որ զինվորական ծառայությունից խուսափելու դեպքերը կանխելու նպատակով, քաղաքացիություն փոխելու համար պետական տուրքի նման չափի բարձրացումը՝ խնդրահարույց է և չի բխում «Պետական տուրքի մասին» օրենքի 2-րդ հոդվածի հիմքում դրած նպատակներից: Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով, որ ՀՀ քաղաքացիությունը փոխելու համար պետական տուրքի տարբերակված դրույքաչափ սահմանելու կառուցակարգը խնդրահարույց է, առաջարկվում է այն փոխարինել հանրային իրավական դրամական պարտավորությամբ: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի փոխարեն «Պաշտպանության մասին» օրենքի 21-րդ հոդվածում կատարել լրացում՝ հետևյալ

բովանդակությամբ. «Պաշտպանության մասին» օրենքի 21-րդ հոդվածը լրացնել նոր 3.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «3.1. Մինչև զինվորական հաշվառման վերցվելը 16 տարին չլրացած արական սեռի քաղաքացիները սույն օրենքի ուժով Հայաստանի Հանրապետության նկատմամբ ունեն 15 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով հանրային իրավական դրամական պարտավորություն: Սույն մասով նախատեսված պարտավորությունն իրավահաջորդության կարգով չի փոխանցվում և դադարում է քաղաքացուն զինվորական հաշվառման վերցնելու փաստի ուժով կամ հօգուտ պետական բյուջեի վճարմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու դեպքում:»:
2. 2025 թվականի հունվարի 22-ի «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-5-Ն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից (2025 թվականի սեպտեմբերի 1-ից) փոփոխության է ենթարկվելու նախագծով փոփոխվող հոդվածը, ուստի անհրաժեշտ է չեղյալ ճանաչել վերոնշված օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38.1-ին հոդվածի 1-ին մասի պահանջների:
3. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված օրենքն ուժի մեջ է մտնելու ժամկետին (պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից)՝ հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը: Վերոգրյալ կարգավորումները համադրելով նախագծում նախատեսված նորմի ուժի մեջ մտնելու ժամկետի հետ՝ անհրաժեշտ է սահմանել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ: Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծերի փաթեթը ներկայացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակման կարիք ունի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի ՀՕ-23-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ Նախագծերի ընդունումը չի հանգեցնի ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման և կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների ավելացման: